

ՆԱՀԱՊԵՏ ԲՈՒՉԱԿԻ ԴԻՒԱՆԸ, սիրոյ երգեր, խրատական եւ այլաբանական երգեր, պանդուխտի երգեր: Բնական ուսումնասիրութեամբ մը հրատարակեց Արշակ Չօպանեան: Փարիզ, 1902 թ. Գինն է 3 ֆրանկ:

Ո՞վ կարող էր երևակայել, թէ հայերը ունեցել են մի բանաստեղծ այն էլ տասնվեցերորդ դարում, որի անունով այսօր պիտի պարծենայ ամբողջ հայութիւնն անխտիր: Բանաստեղծ, որի ստեղծագործական տաղանդն այսօր համեմատուում է Ֆրիդուսիի և Հաֆիզի, Հեյնէի և Վիլիբի հանճարների հետ: Մենք գիտէինք, որ մեր ոսկէ դարում ունեցել ենք Նարեկացի և Շնորհալի և այնուհետև երկար դարերի խաւար ամայութիւն այս ու այն տեղ հազիւ նշմարուող լուսոյ շողքերով: Գիտէինք, որ տասնուիններորդ դարի հայի մտաւոր վերածնութիւնը տուել է մեզ մի քանի տաղանդաւոր բանաստեղծներ, որոնց ստեղծագործական ձիրքը հայրենասիրաբար ճիգն ենք արել դնել եւրոպական համաշխարհային տաղանդների շարքը և զժբաղդաբար չենք կարողացել: Գիտէինք, որ ունեցել ենք ժողովրդական աչուղներ, որոնց քնարը միշտ և ամենուրեք հնչել է միատեսակ, ինչպէս իրանց ասիական սազն իւր մելամաղձիկ հնչիւններով, մի միատեսակութիւն, սակայն, որ անհամեմատ գերազանց է շատ յանգամոյների արհեստական բռնազբօսիկ ստեղծագործութիւններից: Գիտէինք նաև, որ կան այժմ մեզանում մի շարք քնարերգուներ, որոնք տակաւին յոյսերով են մեզ կերակրում և որոնցից միայն երկուսը այդ յոյսերն արդարացնելու շատ թոյլ նշոյլներ են արտադրում: Մի խօսքով սրտիցաւօք համոզուած էինք, որ հայը քնարերգութեան մէջ տակաւին շատ տարիներ պիտի սպասի իւր Հէյնէներին, Միցկիվիչներին, Պուշկիններին ու Լերմոնտովներին, որ մեզանում պօէտիքական տաղանդները դեռ միջակութիւնից դէնը չեն անցել, շնորհիւ գուցէ այն հանգամանքի, որ հայոց նոր գրականութիւնն ընդհանրապէս դեռ նոր է սկսում բարգաւաճել: Մինչև այսօր երբ առիթ էր լինում մեր աշխարհիկ պօէզիան քննական հայեացքի ենթարկել, մնում էինք գլխակոր, ամօթահար, համեմատելով նրան ոչ միայն առաջնակարգ եւրոպական պօէզիաների այլ և երկրորդական ազգերի—սկանդինավիցիների և լեհացիների—ստեղծագործական ոյժի հետ:

Սև ահա մի նուրբ գրագէտի ջանքով հրատարակ է ձեռք-
 ւում հազիւ 100 երեսից բաղկացած մի տետր, որ ոյժ ունի
 յեղաշրջում առաջացնելու մեր հայեացքների մէջ հայի ստեղ-
 ծագործական ընդունակութեան վերաբերմամբ, Ասպարէզ է
 գալիս ամբողջ չորս դար շարունակ մեր աչքերից թաղուած
 մի հակայական անձ, որի երկերը կարելի է ամենայն համար-
 ձակութեամբ դնել եւրոպական բոլոր ազգերի դասական քնա-
 րերգունների շարքը առանց վախենալու, թէ նրանց փալը կա-
 րող է նսեմանալ մարդկային հանճարի բարձրագոյն արտագրու-
 թիւնների շողքերից:

Նահապետ Բուչակի և նրա երկերի մասին «Նումայի» ան-
 ցեալ 1902 թ. համարներում տպուած է պ. Յովհ. Թաղէտեանի
 մանրամասն ուսումնասիրութիւնը: Առաջարկելով մեր ընթեր-
 ցողներին նորից կարգաւ այդ յօդուածը, մենք չենք ուզում
 կանգ առնել Բուչակի երկերի վրայ և նորից քննութեան են-
 թարկել նրանց: Այս անգամ խնդիրը վերաբերում է բանա-
 ստեղծի երկերի ժողովածուին, որ լոյս է տեսել Փարիզում պ.
 Արշակ Չօպանեանի հրատարակութեամբ և առաջարանով: Մենք
 ծայրէիծայր կարդացինք Բուչակի երկերը և այժմ դժուարա-
 նում ենք մեր հիացումը արտայայտել մի քանի խօսքերով:
 Այսքանը կասենք, որ մեր թէ հին և թէ նոր բանաստեղծնե-
 րից ոչ մինը այնպիսի խոր ապաւորութիւն չի թողել մեզ վրայ
 զգացումների խորութիւնով ու անկեղծութիւնով, որպէս Բուչակը
 և մենք եթէ ոչ լիովին գէթ մասամբ բաժանում ենք պ. Չօ-
 պանեանի բարձր հիացումը այդ բանաստեղծով:

Բերում ենք մի քանի կտորներ բանաստեղծի երկերից, հետե-
 ւելով Չօպանեանի ընտրութեանը որպէս զի մեր ընթերցողնե-
 րին մի թեթև գաղափար տանք այդ փայլուն տաղանդի մասին:

Ո՛վ աւելի սիրուն, աւելի ճոխ ու աւելի կենդանի դոյ-
 ներով նկարած է սիրուած էակին դէմքը, գոչում է պ. Չօ-
 պանեան իրաւացի յափշտակութեամբ և առաջ է բերում.

«Երեսդ է լուսնին նման ու զիլֆերդ ի դատիր զիշեր.
 «Ընքեր բեհեշտի խնծոր և ի ծովուն տուած քեզ աչեր.
 «Ուններ կեռումեռ ունիս, թուխ աչեր, թարթիչդ է նետեր.
 «Բերանդ է լայէ Ֆղան, մէջն ի լիքն է մարգարիտներ»:

Ո՛վ գծած է աւելի դմայելի պատկեր մը խորհրդանշանե-
 լու համար անեղ ու գողար գեղութիւնը, որուն մէջ սէրը կը
 կաշկանդէ իր զոհին սիրտը.

«Ո՛ր էիր, սուկից եկար, անծանօթ, զիս սիրեցիր.
 «Կրակն ի թէզնիքդ ունիր, իծոցիդ ի վար թափեցիր.
 «Քո սէրդ ալ ոսկի արիր, իմ սրտիս քուրան հալեցիր.
 «Վարձար զան հալեա արիր, և իմ սրտիս ականջն անցուցիր»:

Ո՛վ արձակած է աւելի խորին, աւելի սրտայոյզ աղաղակ
 մը՝ ողորելու համար անգութ Վարր»:

«Թուխ աչք ու թուխ ունքեր ունիս, լայն ճակատ ու
 կարմիր երես».

«Այդ ճերմակդ որ դուն ունիս, զչամամ ծիծերդ որ ինչես».

«Մեռնես այլ անդին երթաս՝ զայդ ճերմակ ծոցիկդ ինչ
 առնես».

«Ջամէն որդերն ուտեն, դու էր զիս մահրում կու պահես»:

Ո՛ր տարվական պաղատանքին կրցած է ապ շեշտ մը ա-
 ւելի աղելսարչ ու աւելի անուշ».

«Այդ քո ստեղծողիդ համար, երբ քայլես՝ զուներդ մի՛
 շարժեր».

«Այդ քո աչերուդ խնճերն շատ մարդու արիւն է խմեր».

«Խօշ ես, արևոտ համար, որբուկ եմ, զիս մի՛ լացնէր».

Տղայ եմ, չեմ ի կենար, զիս ի քո կրակն մի՛ ձգեր»:

Ո՛վ կրցած է վտարուած, իր Վար»-էն հեռու մնացած
 սիրահարին ողբը աւելի քնքուշ ու աւելի զօրեղ կերպով կող-
 կողիլ:

«Իմ եար, խղճս քո գերուդ, քո գերուդ մէն մէն կենալուդ».

«Վաղտնի ալանի լալուս վախեմ թէ ելնեմ աչերուս».

«Լսե՛ր եմ որ վարդ ունիս, ուզարկէ տեստէ մը գերուս».

«Պաղնեմ աչերուս դնեմ որ դատրի աչերս ի լալուս»:

Սև ո՛վ աւելի հզօր կերպով պատկերացուցած է սիրոյ ե-
 ղազին մէջ ամբողջ կեանքին հոյդը ցամաքեցուցած երիտասար-
 դին քայքայումը».

«Սուրաթ ու ճրագ դրիր, զիս ի քո լուսդ ձէնեցիր».

«Ձէդ ի քո մէջ ծովունդ եկի, լօք զարկիր ճրագ ան-
 ցուցիր».

«Ս՛ա էր քո ամէն ումէան, այ հողեկ, որ ինձ կուտայիր».

«Ճրագդ, սմ, ալ ինչ վառած՝ երբ բազկիս ուժն հատուցիր»:

Բայց Քուչակը միայն սէրը չէ երգում: Ոչ պակաս աւիւ-
 ճալի են և անկեղծ նրա պանդխտի երգերը նաև խրատական
 երգերը:

Պէտք է ուրեմն շնորհակալ լինել պ. Չօպանեանից, որ

գտնելով այդ սքանչելի երգերը այսօր հրատարակել է մի ոգեւորուած յառաջաբանով, Պ. Չօպանեանը Փարիզում հրատարակուող «Անտիտ» ամսաթերթի խմբագիրն է, մի երանգուն տաղանդաւոր երիտասարդ, որի գրականական գործունէութիւնը արժանի է ամենայն խրախուսանքի: Նա իբրև հրատարակախօս այսօր չունի հաւասարը տաճկանայերի մէջ, իսկ իբրև գրականագէտ և գեղարուեստական երկերի նրբամիտ գնահատող կարող է օրինակել լինել մեր ռուսահայ և տաճկահայ քննադատներին շատերի համար: Քուչակի հրատարակութիւնը նրա գեղարուեստական ճաշակի նրբութիւնն ապացուցանող շատ փաստերից մէկն է: Միթէ հարկաւոր է աւելացնել, թէ նա արժանի է բարոյական խրախուսանքի և նիւթական աջակցութեան: Քուչակի երգերը հրատարակել է իւր սուղ միջոցներով և հրատարակել է շատ չքեղ: Հասարակութիւնը պարտաւոր է գնել այդ երգերը ոչ միայն ազգասիրաբար, այլ և իւր սեպհական հաճոյքի համար:

Ե.

ՅՈՒՎ ՀԱՄԵՆԷՍ ՄՐԱՆՍԱՍԵԱՆԵՑ: Հօրոտ-Մօրոտ. պատկերներ իրական կեանքից: Գիրք II Թիֆլիս 1903 զինն է 30 կ.

Յովհաննէս Մալխասեանը օգտակար կոչուող գրական գործիչներիցն է: Նա այն գրողներիցն է, որոնք չեն ուզում և չեն կարող շարագրել, այլ միմիայն արձանագրում են այն, ինչ որ տեսնում են: Շատ անգամ նրանք իրանց տեսածը համեմուտ են սեփական դատողութիւններով, քայց յամենայն դէպս գրանք նրանց աշխատութեան լաւագոյն մասը չեն կազմում: Եւ Մալխասեանը օգտակար ոյժ էր, երբ աշխատակցում էր լրագրին, նա նոյն օգտակար գրողը մնաց և այժմ, երբ իր գրական լուսման տալիս է առանձին հրատարակութիւններով: Վերջիններիս մէջ գուտ ազգագրական ճիւղին են պատկանում «Հայ գեղջուկի արքած»-ի երկու մասերը: իսկ կիսա-գեղարուեստական և կիսա-ազգագրական ճիւղին են պատկանում նրա «Սերդուս» վէպը, և «Հօրոտ-Մօրոտ»-ի երկու գրքերը, որոնցից առաջինը նոր է լոյս տեսել: «Սերդուս»ը մի սարսափելի դրամայի պատմութիւն է և հեղինակը իբրև ճարտասան պատմիչ ճիշտ որ